ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մարդու կյանքի հոգեվերլուծությունը հիմնականում կապված է նրա սոցիալական էության հետ: Նրա զարգացումը պայմանավորվում է ընտանիքի, դպրոցի, միջավայրի ազդեցությամբ: Պատանիների իրավագիտակցությունը ձևավորվում է բարոյական ըմբռնումների զարգացման հիման վրա:

Պատանիների իրավագիտակցությունը հոգեբանորեն նախ ձևավորվում է ընտանիքում: Ընտանիքը լինելով տվյալ պետության փոքր մոդելը՝ իրավագիտակցության հոգեբանական ձևավորման նախահիմքն է: Հիմնականում ընտանիքն է պետության համար քաղաքացի կերտում, անձնավորություն ձևավորում, մարդու մեջ կազմավորում անհատականություն: Ծնողները իրենց բարոյական նկարագրով հոգեբանորեն ազդում են իրենց երեխայի բնավորության ձևավորման և կայունացման վրա: Բարենպաստ ընտանիքում են հոգեբանորեն ձևավորում անձի բնավորության և վարքագծի լավագույն հատկությունները, որոնք դառնում են նրա կյանքի ուղեկիցները: Իսկ այս խնդրում գլխավոր դեր ունի պետությունը, որովհետև որքան համերաշխ ու ամուր է ընտանիքը, այնքան նպաստավոր պայմաններ են ստեղծվում անձի ճիշտ դաստիարակության, իրավագիտակցության ձևավորման համար:

Բարոյական նորմերի ձևավորման ազդակներից է նաև միջավայրը: Անհատն ապրում, սովորում, ծառայում զինված ուժերում, աշխատում է այլ մարդկանց հետ ունեցած փոխհարաբերություններում: Միջավայրն է, որ լավ կամ վատ հարաբերություններ է հաստատում անհատի և նրա շրջապատի միջև, ազդում նրա հոգեբանության, համոզմունքների և բարոյական նորմերի ձևավորման վրա: Միջավայրում են ստեղծվում հոգեբանական մթնոլորտ, հոգեբանական վիճակներ, տրամադրություններ: Շփման ընթացքում, իհարկե հնարավոր են կոնֆլիկտային իրավիճակներ, պետք է գտնել դրանց լուծման հոգեբանական ուղղիներ:

Իրավագիտակցության շեղումների հասարակական հիմքը հասարակական կոնֆլիկտային հարաբերություններն են: Հասարակության մեջ տնտեսական, քաղաքական, հոգեբանական և բարոյաիրավական կոնֆլիկ-

տային հարաբերությունները ապակայունացնում են հասարակարգը, պատճառ դառնում ոչ ճիշտ դաստիարակության:

Շատ դեպքերում պատանիները կարծում են, թե թերությունների ու սխալների փոխադարձ քողարկումը ընկերասիրությունն է, մինչդեռ դա միայն հանգեցնում է անցանկալի հետևանքների:

Այդպիսի պայմաններում խոսք չի կարող լինել իրավագիտակցության ձևավորման մասին: Իրավագիտակցության կայունացման խնդրում պետք է լավ պատկերացնել շեղումների նախականխման հոգեբանական պայմանները: Իրագիտակցության ձևավորումը կապված է ոչ միայն անհատի հոգեբանության, այլև հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացների հետ: Մարդիկ միշտ չէ, որ հասկանում են հասարակական կյանքի օրինաչափ երևույթները, կարողանում արժեվորել շրջապատի մարդկանց գործունեությունը, վարքագիծը: Ճիշտ արժեվորելը բարոյագիտակցության հիմնական պահանջն է, իսկ նյութական ու հոգևոր արժեքներն ակտիվորեն օգնում են մարդկանց իրավական և բարոյական հայացքների ձևավորմանը: Վերջին տարիներին փորձ է արվում ամրապնդելու հասարակական իրավագիտակցությունը: Դա պետական գործ է, պետությունը պետք է ապահովի անհատի իրավունքների պաշտպանությունը, որովհետև իրավագիտակցության կայունացմանը նպաստում է պետության կայունացմանը, իսկ օրենքների կայունացումը և ըմբռնումը կապահովեն փոխադարձ միասնությունը պետության և հասարակության միջև: Օրենքների կատարումը կապված է այն բանի հետ, թե իրավական է պետությունը, թե՝ ոչ, իսկ իրավական նորմերը պետք է համապատասխանեցնել հասարակության պահանջներին:

Մեր հանրապետությունում գործող օրենքները կյանքում կիրառելու խնդրում կան դժվարություններ, որոնք կապված են երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, հասարակական հարաբերությունների հետ: Շատ-շատերը ծանոթ չեն օրենքներին, մտածում են, որ իրավունքը և պարտականությունները մեծերի գործն են: Պատանիներին պետք է բացատրել, ծանոթացնել օրենքների հետ, հարստացնել նրա պատկերացումները, պարզաբանել նրա տեղն ու դերը հասարակական կյանքում: Պետք է ուշադրությունը կենտրոնացնել սոցիալ տնտեսական, քաղաքական կողմնորոշումների վրա:

Մեծ դեր ունի սահմանված իրավունքների մասին օրենքների հիմնավորումը: Դպրոցներում պետք է մեծ ուշադրություն դարձնել ավագ դպրոցականների իրավական դաստիարակությանը: Նրանց հասկանալի պետք է դարձնել, որ իրենք են պետության ապագա կերտողները: Այս ուղղությամբ, պետական ծրագրերի հետ մեկտեղ աշխատանքներ պետք է տանեն հասարակական

կազմակերպությունները, մանկավարժներն ու հոգեբանները, ինչպես նաև իրավապահպան ոլորտի ներկայացուցիչները:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ երեխայի խնամքը և դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, դրա համար պատասխանատվություն են կրում ծնողները կամ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Հենց նրանք պետք է ստեղծեն անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:

Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը և դաստիարակությունն ապահովելու նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, երեխայի բարեկեցությունն ապահովելու համար խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը:

Իհարկե, բարոյական նորմերի արմատները ծգվում են ազգային հոգեբանության խորքերը, դրանք արտահայտվում են ազգային ինքնագիտակցության մեջ, բայց սոցիալական ցնցումները վնասում են բարոյական նորմերը, ինչը պարզորոշ արտահայտվում է մեր ժամանակներում:

Այսօր դեռահասների գերակշռող մասի հոգեբանությունը բոլորովի չի համապատասխանում կյանքի վերաբերյալ մեր նախկին պատկերացումներին: Անհամատեղելին շատացել է մեր կյանքում, շատ երեխաներ դարձել են թափառաշրջիկներ, մուրացկաններ, դպրոց չեն հաճախում, ավելին՝ ներգրավվում են հանցավոր գործունեության մեջ: Երեխաների հոգեկան մաքրության վերականգնման հարցում մեծ է և ծնողների, և պետական մարմինների դերը, որովհետև դեռահասներն ի վիճակի չեն ինքնաքննադատությամբ բացահայտել կամ ընկալել սեփական սխալները:

Օրինակ՝ երեխաների բարոյական ընբռնումների մեջ բոլորովին նոր իմաստ է ստացել ընկերություն հասկացությունը:

Սխալ ընկերական հարաբերության խզումը պետք է նախապատրաստել հոգեբանական արդարացված հնարներով: Չպետք է միանգամից նսեմացնել ստեղծված ոչ ճիշտ ընկերական կապերը, հարկավոր է բացատրական հնարքներով նրանց ետ պահել անառողջ միջավայրից, հասկանալի դարձնել դրա հավանական անցանկալի հետևանքները, նրանց գիտակցության մեջ ամրապնդել բարու և գեղեցիկի ընկալումը:

Սակայն ընկերական միջավայրը, որը երեխայի բարոյական ըմբռնումների ձևավորման գործում հաճախ ավելի մեծ դեր է խաղում, շատ անգամ դուրս է մնում ծնողների հսկողությունից: Ցավոք, քիչ չեն հարբեցող, անհաշտ ծնողները, որոնց անառողջ փոխհարաբերություններն անպայմանորեն բացասաբար են անդրադառնում երեխաների հոգեբանությանը:

Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու իրավունք:

Պետական համապատասխան կազմակերպությունները պայմաններ են ստեղծում երեխայի անհատականության, տաղանդի դրսևորման, մտավոր և ֆիզիկական ընդունակությունների զարգացման համար: Ստեղծված են հանրակրթական, մասնագիտական, տեխնիկական, մշակութային, մարզական կենտրոններ: Աշխատանքներ են տարվում տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր ստեղծելու ուղղությամբ:

Այժմ, քաղաքական և սոցիալական բարեփոխումների ժամանակաշրջանում, երբ որոշակի դժվարություններ են ստեղծվել հասարակական կյանքում, կրթական համակարգը գտնվում է անկայուն վիճակում:

ՄԱԿ-ի Կոնվենցիայի 29-րդ հոդվածի դրույթների համաձայն, Հայաստանի Հանրապետությունը դեռահասների կրթությունը պետք է նպատակաուղղի, որպեսզի երեխան գիտակցի և հարգանք տածի մարդու իրավունքների, նրա ազատության հանդեպ, հարգանք մշակի սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների նկատմամբ:

Նույն հոդվածի համաձայն, յուրաքանչյուր երեխա ունի ծնողին հանձնվելու և նրա հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված այն դեպքերից, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

Ընտանիքի գլխավոր խնդիրը երեխաների անհատականության ձևավորումն է: Սիրել երեխային, չի նշանակում աչք փակել թերությունների նկատմամբ, պարզապես կատարել նրա ցանկությունները: Ինչպես ծնողները, այնպես էլ ընտանիքի ավագ անդամները իրենց բարոյական նկարագրով հոգեբանորեն ազդում են դեռահասի բնավորության ձևավորման և կայունացման վրա, անձնական փոխհարաբերություններով և փոխադարձ շփումներով մշակում են նրանց մեջ զսպվածություն, սկզբունքայնություն, բարյացկամություն, բարեկրթություն և այլն: Շփման ընթացքում, իհարկե, հնարավոր են կոնֆլիկտային իրադարձություններ: Երեխայի դաստիարակության վրա բացասական ազդե-

ցություն են թողնում անհետևողականությունը, երեխայի նկատմամբ ավելորդ խստությունները, պատիժների անարդարացիությունը, երեխայի հետ մտերիմ հարաբերությունների պակասը: Կոնֆլիկտը խորանում է, երբ բախվում են դեռահասի ցանկությունները և ծնողների բարոյական պահանջները: Երեխային սրտակից բարեկամ լինելու համար ծնողից պահանջվում է հոգեբանական մեծ կարողություն: Ծնողը պետք է համատեղի և քննքշանքը, և պահանջկոտությունը: Սխալ է դեռահասի ամեն մի արարքը ներելը կամ անտեսելը: Պետք է դեռահասի հետ ունեցած հարաբերություններում պահպանել որոշակի հեռավորություն, բայց և ջերմությունը, վստահել նրան:

Բարենպաստ ընտանիքում են ձևավորվում երեխայի բնավորության, վարքագծի լավագույն հատկությունները, որոնք դառնում են նրա կյանքի ուղեկիցը: Եվ որքան համերաշխ է ու ամուր ընտանիքը, այնքան նպաստավոր պայմաններ են ստեղծվում դեռահասի ճիշտ դաստիարակության համար:

Կյանքը ցույց է տալիս, որ ծնողների թելադրանքով են դեռահաս շատ երեխաներ զբաղվում մուրացկանությամբ, նույնիսկ գողությամբ, քիչ չեն դեպքերը, երբ ծնողները լքում են երեխաներին, դրա ապացույցը մանկատների երեխաների մեծ քանակն է: Անվիճելի է, որ հանցագործություն կատարող դեռահասներից շատերի հոգեբանության վրա ազդում են ծնողները, նրանք դաստիարակված են լինում անկայուն ընտանիքներում, տեսնում են կռիվներ, դաժանություն: Այդպիսի ծնողները, որոնք չեն կարողանում իրենց պարտականությունները կատարել, ենթարկվում են քրեական պատասխանատվության, պետական հարկադրանքի ավելի խիստ միջոցների: Դեռահասի իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների հասարակական պարտքն է, նրանց իրավաբանական պարտականությունը: Երեխայի դաստիարակությամբ շահագրգռված է և պետությունը, և հասարակությունը:

Հոգատարությունն է դեռահասի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքի հիմքը: Մյուս կարևոր հատկանիշը պահանջկոտությունն է: Պահանջկոտությունը ոչ միայն դեռահասին հիշեցնում է իր պարտականությունները, այլև դառնում է բնավորության հիմնական հատկանիշ:

Պահանջել երեխայից մի բան, չի նշանակում դեմ գնալ նրա սեփական ցանկությանը: Երեխայի բարոյական դաստիարակության կարևոր մեթոդներից է մեղմ, բայց սկզբունքային վերաբերմունքը: Եթե դեռահասը զգում է մտերմություն ծնողի, ուսուցչի նկատմամբ, նրա հոգում առաջանում է անկեղծություն, վստահություն, նա դառնում է ճշմարտախոս, կարող է իր հոգին բացել, ճանաչել տալ իրեն, իսկ դա հնարավորություն է տալիս ճանաչել

դաստիարակել։ Իրեն սիրող ծնողի, ուսուցչի պահանջները դեռահասը կատարում է մեծ սիրով։

Մեր օրերում հիմնովին փոխվել են մարդկային ըմբռնումները, շատ շատերը հրաժարվել են կյանքը կարգավորող լավագույն ավանդույթներից, ծնվել են անհամատեղելի նոր սովորություններ։ Ստեղծված սոցիալական անհավասարությունը այժմ էլ ոչնչացնում է գեղեցիկ շատ զգացումներ, մարդկանց հոգում ծնում ատելություն։ Կյանքի նկատմամբ թերըմբռնումներն ավելի զգալի տեղ են գրավում անչափահասների շրջանում։ Իսկ դա հաճախ դառնում է ճակատագրական, որովհետև նրանց մեծ մասը հոգեբանորեն անկարող է զգալ սեփական սխալները, ի վիճակի չէ ինքնաքննադաբար բացահայտել իր բնավորության և վարքի արատավոր կողմները։

Այժմ շատ երեխաներ հայտնվել են կյանքի մակընթացությունների մեջ։ Ամեն երեխա չէ, որ հնարավորություն է ունենում ապրել բարեկեցիկ ընտանիքում, ստանալ ճիշտ դաստիարակություն, որը մարդու երջանկության գլխավոր պայմանն է։

Հանրապետությունում հաշվառման մեջ են շուրջ 500 մուրացիկ ու անօթևան երեխաներ։ «Իրավաբանական թերթի» (1998թ. դեկտեմբեր, թիվ 4) տվյալներով անչափահասների գաղութում այսօր մոտ 80 դատապարտյալ կա, իսկ 30-ից ավելին դեռ այն ժամանակվա տվյալներով գտնվում էին նախնական կալանքի տակ։ Նրանց գերակշռող մասը ծնողազուրկ կամ սոցիալապես անապահով ընտանիքներից են։ Երեխաներին ճիշտ կողմնորոշելը մեծերի գործն է։

Դատապարտյալների հետ պետք է անհատական աշխատանք տանել, համակողմանի ուսումնասիրություն կատարել, պարզել դատապարտյալի հոգեկան վիճակն ինչպես հանցագործություն կատարելու պահին, այնպես էլ դրանից հետո, երբ արդեն ինքը՝ դատապարտյալը, փորձում է արդարանալ կամ ընդունում է կատարած հանցանքը։ Միայն հոգեբանական ճիշտ վերաբերմունքը և ոչ թե քրեական պատասխանատվության վախը կարող է վերափոխել նրան։

Գործնական կարևորություն ունի հոգեբանական համուզումը, իսկ անհատի հոգեբանությունը նրա սկզբունքների և գործողությունների կոնկրետ արդյունք է, ՀՀ ուղղիչ աշխատանքային օրենսդրության մեջ դատապարտյալի վերադաստիարակման հիմնական միջոցը պատիժը կրելու ռեժիմն է, ընդհանուր կրթությունը պրոֆտեխնիկական ուսուցումը, հասարակական օգտակար աշխատանքը։ Իհարկե, սրանք օգնում են դատապարտյալի համոզմունքների, բարոյական սկզբունքների վերադաստիարակմանը, բայց անհրաժեշտություն է, որ անչափահասների հետ աշխատի հոգեբանը։

Վերջին տարիներին մեր հանրապետությունում որոշակի աշխատանքներ են տանում անչափահասների հետ աշխատող թաղապետարաններին կից բաժինները, դպրոցները, համայնքները, անչափահասների գործերով տեսուչները, սակայն, ցավոք, դեռևս արձանագրվում են զգալի չափերի հասնող, ընդհուպ ծանր հանցագործություններ:

Ամեն մի ազգային անվտանգության նախարարության կոլեգիայի նիստի օրակարգում քննարկվել է անչափահասների կողմից կատարած հանցագործությունների և իրավախախտումների դեմ պայքարի կազմակերպման վիճակը: Ճշմարտացիորեն որոշման մեջ շեշտը դրվում է ավելի շուտ հանցագործությունների կանխման վրա: Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների դրդապատճառներից գլխավորը համարվում է մեծերի կողմից անչափահասներին հանցագործության մղելը: Դա հին երևույթ է, բայց նորոգված ձևով է դրսևորվում մեր օրերում: Պետք է ուժեղացնել իրավական ներգործության մեթոդները, բացահայտել անհատների և խմբերի նմանօրինակ հակահասարակական գործողությունները, անուշադրության չպետք է մատնել անչափահասների կյանքի հետ կապված անհամեմատելի նոր եևույթները:

Փաստերը, որոնք ներկայացնում ենք, հիմնվել են սեփական դիտարկումների վրա: Կենտրոնական փակ շուկայի կանգառից շրջան մեկնող ավտոբուսում հայտնվեց 9-10 տարեկան մուրացիկ մի տղա: Ոմանք նրան դրամ մեկնեցին, ոմանք առարկում էին. «Այդ երեխան գլխին տեր ունի», «նրան սպասում է հաջորդ կանգառում, որպեսզի վերցնի հավաքածը և տղային հասցնի հաջորդ ավտոբուսին»: Հաջորդ կանգառում տղային մոտեցավ 20-25 տարեկան մի երիտասարդ, և մուրացիկը նրան մեկնեց հավաքածը: «Տեսեք, տեսեք,- աղմկում էին շատերը,-չի համբերում անգամ ավտոբուսը շարժվի»: Մեկ ուրիշ օրինակ. ավտոբուսում սկսեց երգել ու դրամ հավաքել անչափահաս մի տղա: Նախորդի համեմատությամբ, սա մաքուր արտաքին ուներ: Երբ մոտենում էինք հաջորդ կանգառին, պատանին լռեց, վերջացած համարեց իր աշխատանքը և առաջացավ: Երբ ավտոբուսը շարժվում էր, նրան մոտեցավ մի երիտասարդ: Սրանք երևույթներ են, որ ծնվել են մեր օրերում: Նման մուրացիկ անչափահասներ հայտվում են այլ ավտոբուսներում էլ: Ինչպես երևում է կազմակերպիչներին դա բերում է որոշակի եկամուտ: Պետք է հետևողական լինել և կանխել հակահասարակական նման երևույթները և օրենքի ուժով պատժել կազմակերպիչներին: Իրավական ներգործության մեթոդներն անհրաժեշտ են, սակայն չպետք է սահմանափակվել զուտ օրենքի սահմաններում: Այս խնդրում գլխավոր գործոններից մեկը նաև բարոյական ներգործությունն է: Այս առումով մեծ անելիք ունի նաև հասարակությունը, մեզնից յուրաքանչյուրը: